Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 10

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստի

18.04.2017թ. ք. Երևան
ժ. 14.00 ՀՀ ԱՍՀՆ նիստերի դահլիճ

Մասնակցում էին՝
Կոմիտեի նախագահ՝ Ա. Ասատրյանը
Կոմիտեի անդամներ՝ Ա. Պետրոսյանը, Ս. Հարությունյանը, Ջ. Բաղդասարյանը, Ա, Մարգարյանը, Ա. Գրիգորյանը, Ս. Տերտերյանը
Բացակայում էին՝ Ա. Աբրահամյանը

Հրավիրված էին՝ Թ. Ավետիսյանը, Դ. Հակոբյանը, Ն. Սարգսյանը, Ռ. Սմբատյանը, Է. Գևորգյանը, Ա. Մանվելյանը, Ա. Կեսոյանը, Հ. Մուրադյանը, Կ. Բաբախանյանը, Ա. Բարսեղյանը, Ա.Ավետիսյանը, Հ. Զաքարյանը, Ա. Աբրահամյանը, Ձ. Մարգարյանը, Շ. Խաչատրյանը, Հ. Բալասանյանը, Ա. Գևորգյանը, Գ. Զատիկյանը, Հ. Ներկարարյանը, Մ. Դավթյանը, Ա. Մնացականյանը, Ն. Մարգարյանը, Ա. Կարապետյանը, Մ. Ղազարյանը, Ռ. Հովհաննիսյանը, Ջ. Ջհանգիրյանը

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար /այսուհետ՝ Նախարար/, կոմիտեի նախագահ Ա.Ասատրյանը նիստի սկզբում հղում անելով օրակարգում ընդգրկված և ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կազմված հաշվետվություններին՝ հստակեցրեց մասնակիցների կողմից դրանց վերաբերյալ ունեցած առաջարկությունները:

Նախարարի տեղակալ Ս. Հարությունյանը նշեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչ այժմ ներքին աուդիտի կողմից 2016 թ. կատարված որևէ ուսումնասիրության արդյունքներ չի ներկայացվել և նպատակահարմար է, որ հաջորդ նիստի օրակարգում ամփոփ ձևով ընդգրկվի նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի 2016թ. կատարած աշխատանքների հաշվետվությունները, միաժամանակ կարևորեց փաստացի, ամբողջական ցուցանիշների ներառումը վերոնշյալ հաշվետվություններում:

Ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ** հաստատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 2017 թվականի ապրիլի 18-ի նիստի հետևյալ օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 18.04.2017թ. նիստի

1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 07 խմբի, 01 դասի «05. Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի թվով 11 կազմակերպություններում իրականացված գնումների գործընթացի համապատասխանության աուդիտի մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Ա.Ավետիսյան)

1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 07 խմբի, 01 դասի «05. Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Ս. Հարությունյան, Ջ. Բաղդասարյան, Զ. Մարգարյան, Ա. Մանվելյան)

Ս. Տերտերյանը ներկայացնելով օրակարգի 1-ին հարցը անդրադարձավ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 07 խմբի, 01 դասի «05. Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքներին, արձանագրված թերություններին և ներկայացված առաջարկություններին:

Անդրադառնալով վերը նշված ծրագրերի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքում արձանագրված թերություններին, Ս. Տերտերյանը նշեց, որ ծրագրով նախատեսված ՀՀ ԱՍՀՆ և «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հետ կնքված թիվ ՍՏՊ-10.07.01.05/16 ծածկագրով սուբսիդիայի տրամադրման ծառայությունների մատուցման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) որոշ կետերի պահանջները չեն իրականացվել, մասնավորապես՝ չի ապահովվել անօթևանների կողմից կրկնակի դիմելիության ցուցանիշը (անօթևանների ընդհանուր թվի ոչ ավել, քան 20 %), անօթևանների ընդհանուր թվի առնվազն 10%-ի վերադարձ ընտանիք և առնվազն 20 %-ի ներգրավում մասնագիտական ուսուցման դասընթացներին:

Ս. Տերտերյանն անդրադառնալով փոփոխուն ծախսերի ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած թերություններին նշեց, որ աշխատանքային խմբի կողմից փոփոխուն ծախսերի փաստացի ցուցանիշների ստուգումը չի իրականացվել փոփոխուն ծախսերի հիմք հանդիսացող շահառուների շարժի իրավական հիմնավորվածության բացակայության պատճառով:

Ս. Տերտերյանը մատնանշեց նաև, որ Հիմնադրամում ոչ բոլոր դեպքերում է կազմվել որոշակի բնակության վայր չունեցող անձանց (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) համաձայնագրեր, ինչպես նաև բացակայել է Հիմնադրամի՝ տնօրենի կողմից հաստատված ներքին կարգապահական կամ համակեցության կանոնները: Թերություններ են արձանագրվել անօթևան անձանց կացարան ընդունելու նպատակով հաշվառման, բուժզննում իրականացնելու և դուրսգրման գործընթացներում, ինչպես նաև սննդամթերքի ձեռքբերումն իրականացվել է ոչ թե անկանխիկ, այլ կանխիկ եղանակով:

Ներքին աուդիտի կողմից Հիմնադրամում արձանագրված խնդրահարույց կետերին անդրադառնալով՝ <<Հ. Ք. Կոֆոեդ>> բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ձ. Մարգարյանը նշեց, որ իրականացված աուդիտի արդյունքում արձանագրված հիմնական թերությունը Հիմնադրամի կողմից հրամանագրերի բացակայության, ճիշտ, հստակ լրացման և վարման խնդիրն է: Վերջինիս բացակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հինգ հիվանդատեսակների առկայության դեպքում իրավունք չունեն անօթևան անձանց կացարանում պահելու: Ձ. Մարգարյանն ավելացրեց, որ էլեկտրոնային եղանակով պարբերաբար յուրաքանչյուր շահառուի վերաբերյալ ""Նորք" սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն" հիմնադրամին տրամադրվում է առկա տեղեկատվությունը: Սակայն նախարարությանը փոխանցվող տեղեկատվությունն աննպատակ, անիմաստ է դառնում, եթե Հիմնադրամը չունի հետադարձ կապի մեխանիզմ, համադրելի բազաներ, այսինքն՝ յուրաքանչուր շահառուի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը բավականին աշխատատար է և ժամանակատար: Ինչպես նաև 58%-ի չափով հաստիքների համալրվածությունը լուրջ խնդիր է հանդիսանում պատվիրակված ծառայությունների, աշխատանքների ժամանակին և արդյունավետ եղանակով կազմակերպելու ուղղությամբ:

Ի հավելումն, Նախարարն առաջնային համարեց անօթևան անձին ընդունելու պարագայում հաշվառման գործընթացի անհրաժեշտության հանգամանքը:

Անօթևանների հաշվառմանն անդրադառնալով, Ձ. Մարգարյանը պարզաբանեց, որ անօթևանների վերաբերյալ երեք տեսակի տեղեկատվություն է փոխանցվում նախարարությանը, առկա են համապատասխան էլեկտրոնային գրանցամատյաններ մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը, 2017թ. հունվարի մեկից նաև շրջանառության մեջ է դրվել տնօրենի համապատասխան հրամանագիրքը, սակայն խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ

կառավարության որոշմամբ սահմանված հինգ հիվանդատեսակներ կան, որոնց փաստաթղթերի ձեռքբերումը չափազանց աշխատատար է, դժվար և ֆինանսատար:

Նախարարի տեղակալ Ջ. Բաղդասարյանը նույնպես կարևորեց անօթևան անձանց տնօրենի հրամանագրքում պարտադիր գրանցվելու, հաշվառելու հանգամանքը:

Նախարարն անդրադառնալով «05. Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի շրջանակում մատուցվող ծառայության նկարագրին, կարևորեց անօթևան անձանց որակյալ ծառայություններ մատուցելու, ինչպես նաև հասարակության մեջ վերջիններիս ինտեգրվելու, ընտանիք վերադարձնելու ծրագրի արդյունավետության, նպատակին ծառայելու խնդիրը:

Նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանը անօթևանների խնդիրը որակեց որպես ամենասուր և քննարկվող խնդիրը հասարակության մեջ: Խնդրի արմատական լուծման համար կարևորեց շահառուի սոցիալական դեպքի վարումը՝ ամբողջական գնահատելով նրա կարիքները և կազմելով անհատական վերականգնողական ծրագիր, ինչպես նաև կարևորեց սոցիալական դեպքի վարման գործընթացի կատարելագործմանն ու հզորացմանն ուղղված աշխատանքները:

Նախարարը նշված խնդրի լուծման համար առաջնային համարեց սոցիալական դեպքի վարման միասնական ձևաչափի մշակման անհրաժեշտությունը, որի վերաբերյալ տրվեց հանձնարարական:

Ա. Մանվելյանի կողմից ներկայացված 2014թ. էլեկտրաէներգիայի ավել վճարման արդյունքում առաջացած դեբիտորական պարտքերի վերադարձման խնդիրներին անդրադառնալով Նախարարը Ս. Տերտերյանին հանձնարարեց ևս մեկ անգամ 2014թ. էլեկտրաէներգիայի ավել վճարման արդյունքում առաջացած դեբիտորական պարտքերի վերաբերյալ վերլուծություններ իրականացնել և ներկայացնել եզրակացություն 2014թ. ավել վճարված գումարի վերաբերյալ:

Նախարարի գլխավոր խորհրդական Թ. Ավետիսյանը առաջնային համարեց Հիմնադրամի շահառուների խնամքի հենքի վրա համակեցության կանոնների ներդրման հանգամանքը:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի թվով 10 կազմակերպություններում իրականացված գնումների գործընթացի համապատասխանության աուդիտի մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Ս. Հարությունյան, Ա. Գրիգորյան,)

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ Նախարարը հարցադրեց, թե նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից քանի ՊՈԱԿ-ներում են ուսումնասիրություններ կատարվել: Հարցադրմանն ի պատասխան Ս. Տերտերյանը նշեց, որ 2017-2020թթ. ռազմավարական և 2017թ. տարեկան ծրագրերի, ինչպես նաև Նախարարի 2017թ. փետրվարի 28-ի 37-Ա/1 հրամանի հիման վրա նախարարության ենթակայությամբ

գործող 10 ՊՈԱԿ-ներում կատարվել է համապատասխանության աուդիտ: Հիմնական խնդիրն էր ուսումնասիրել կազմակերպության գործունեության համապատասխանությունն օրենքներին, կանոնադրությանն, այլ իրավական ակտերին, հայտնաբերել բացթողումներ, թերություններ և ներկայացնել առաջարկություն՝ վերջիններիս գործունեությունն առավել արդյունավետ և թափանցիկ դարձնելու նպատակով: Չհայտարարված աուդիտի շրջանակներում աուդիտի են ենթարկվել կազմակերպությունների հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, պահեստավորված սննդամթերքի քանակը և վերջիններիս համապատասխանությունը կնքված պայմանագրերի տեխնիկական բնութագրերին, ինչպես նաև գնումների պլանավորման գործընթացը: Աուդիտի արդյունքում բոլոր 10 ՊՈԱԿ-ներում արձանագրվել են ինչպես նմանատիպ, այնպես էլ մասնավոր բնույթ կրող խախտումներ: Նմանատիպ խախտումներից են առանց գնման պլանի հաստատման և լիազոր մարմնի պաշտոնական կայքում տեղադրման գնման գործընթացի կազմակերպումը, հաշվապահական հաշվառման փաստաթղթերում նշված պահեստի պակասորդն և ավելցուկը, ինչպես նաև սննդամթերքի անհամապատասխանությունը կնքված պայմանագրերի տեխնիկական բնութագրերով սահմանված պահանջներին և կազմակերպության ներքին հսկողության համակարգի ոչ պատշաճ կերպով կազմակերպում, իսկ որպես մասնավոր բնույթ կրող խախտում՝ «Երևանի «Զատիկ» ԵԱԿ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացրած մրցույթի տեխնիկական բնութագրերի մի մասը տարբերվում են Նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 114-Ա/1 հրամանով հաստատված օրինակելի տեխնիկական բնութագրերից մասնավորապես՝ միս հավի, մածուն, կարագ, ձեթ գնման առարկաների մասով, իսկ կարկանդակ հավի, կարկանդակ պանրի, կարկանդակ նրբերշիկով և կարկանդակ կարտոֆիլով գնման առարկաների մասով տեխնիկական բնութագրերը տարբերվում են նախարարության կողմից կենտրոնացված կարգով հայտարարված մրցույթի տեխնիկական բնութագրերից:

Նախարարության ենթակայությամբ գործող 7 ՊՈԱԿ-ներում առանց գնումների պլանի հաստատման և լիազոր մարմնի պաշտոնական կայքում տեղադրման գնման գործընթացի կազմակերպման անդրադառնալով՝ նախարարի տեղակալ Ա. Մարգարյանն ընդգծեց, որ վերոնշյալ խնդիրը առկա է բոլոր ՊՈԱԿ-ներում և քանի որ այն համատարած բնույթ է կրում, այդ պարագայում դիտարկվում է որպես նախարարության թերացում:

Գնումների համակարգման և տնտեսական հարցերի բաժնի պետ Կ. Բաբախանյանը հավելեց, որ կենտրոնացված կարգով՝ էլեկտրոնային եղանակով գնման ընթացակարգերը կազմակերպելու նպատակով 2017 թվականի երկրորդ կիսամյակում գնման ենթակա բոլոր ապրանքների գնումների պլանները և տեխնիկական բնութագրերը՝ օրինակելի ձևին համապատասխան Հանձնաժողովին ներկայացնելու նպատակով, աշխատակազմի ղեկավարի հանձնարարականով առաքվել է բոլոր ՊՈԱԿ-ներին, սակայն ոչ բոլոր ՊՈԱԿ-ներն են ուղարկել:

Նախարարության ենթակայությամբ գործող 6 ՊՈԱԿ-ներում որոշ ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերում որպես պահանջ նշված է, որ որոշ ապրանքներ պետք է մատակարարվի մինչև 50 կգ գործարանային փաթեթավորմամբ, սակայն տվյալ պահանջը մատակարար ընկերությունների կողմից չի կատարվում:

Ըստ ՊՈԱԿ-ի տնօրենների կողմից տրված բացատրության մատակարարների կողմից փոքր խմբաքանակներով մատակարարվող ապրանքների գործարանային փաթեթավորումն ապահովելը բավականին խնդրահարույց է:

Նախարարի տեղակալ Ա. Մարգարյանը, Լոռվա մարզի ՊՈԱԿ-ներ կատարած այցերին անդրադառնալով նշեց, որ "Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն" ՊՈԱԿ-ին մատակարար ընկերության կողմից մատակարարված "մեղր" ապրանքատեսակը տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով ետ է վերադարձվել: Միաժամանակ տեղեկացրեց, որ ներքին աուդիտի հաշվետվության մեջ կազմակերպությունների կառավարման արդյունավետության մասին դիտարկում չի կատարվել:

Ներքին աուդիտի բաժնի կողմից նշվեց, որ Նախարարի տեղակալ Ա. Մարգարյանի կողմից Լոռվա մարզի ՊՈԱԿ-ներ կատարած այցի արդյունքում արձանագրված թերությունների հիման վրա «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» և «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ներ մատակարարված «միս տավարի ոսկրոտ» և «մեղր» ապրանքատեսակները տրվել են լաբորատոր ստուգման, որի արդյունքում պարզվել է, որ մսամթերքը պիտանի է օգտագործման սննդում, իսկ «մեղր» ապրանքատեսակի բաղադրիչներից մեկը չի համապատասխանում սահմանված նորմատիվներին:

Ներքին աուդիտի բաժնի կողմից նաև նշվեց, որ «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ին մատակարավող «Կարկանդակ պանրով» ապրանքատեսակը՝ որակի տեսանկյունից կասկած էր հարուցում /պանրի փոխարեն կարկանդակի մեջ լցոնված էր կաթնաշոռանման զանգված/:

Նախարարի տեղակալ Ս. Հարությունյանն անդրադառնալով ներքին աուդիտի ուսումնասիրության արդյունքներին, ընդգծեց, որ հրամանով նախատեսված պահանջներն ամբողջական չեն ներկայացվել, իրականացված ուսումնասիրությունները թերի են և մակերեսային: Հետագայում հաշվի առնել:

Նախարարի տեղակալ Ա. Մարգարյանը՝ հաշվի առնելով չհայտարարված աուդիտի արդյունքներով արձանագրված ներքին հսկողական համակարգերի պատշաճ կազմակերպումը, առաջարկեց շնորհակալության ձևով խրախուսել «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ-ի տնօրենին:

Ներքին աուդիտի կատարած ուսումնասիրությունների արդյունքներին անդրադառնալով, Նախարարը նշեց, որ ներքին աուդիտի օղակը պատասխանատու է համակարգում առկա և հնարավոր ռիսկերի բացահայտման, գնահատման, կառավարման,

ինչպես նաև ստուգումներով, դիտարկումներով և կատարած հաշվարկներով հիմնավորված ապացույցների ձեռքբերման, հսկողության համակարգերի արդյունավետության, ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիության և ներքին հսկողության համակարգերի ամբողջական գնահատման համար: Ներքին աուդիտի կանոնակարգման տեսանկյունից Նախարարն առաջնային համարեց ներքին աուդիտի օրենսդրության համաձայն, կանոնակարգով սահմանել յուրաքանչյուր աուդիտի ենթակա միավորի ռիսկերը, ռիսկային միավորի նախադրյալները, ռիսկային ուղղություններն ու խնդիրները՝ կարևորելով համակարգը ամբողջությամբ կանոնակարգելու հանգամանքը:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵՑ

1. **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ջ. Բաղդասարյանին և նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների վարչության պետ Ա. Կեսոյանին և <<Հ. Ք. Կոֆոեդ>> բարեգործական հիմնադրամի տնօրեն Շ. Խաչատրյանին՝**

1.1 Կազմակերպել՝ իրականացված ներքին աուդիտի արդյունքների վերաբերյալ քննարկումներ, մշակել և ներկայացնել «05. Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի փոփոխված ամբողջական նոր բովանդակությունը, ինչպես նաև իրավական ակտերում փոփոխությունների հետ կապված ներկայացնել կոնկրետ առաջարկություններ:

Ժամկետ՝ 30 օր

1.2 Առաջարկություն ներկայացնել «05. Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի շրջանակում Հիմնադրամի կողմից սուբսիդիայի տրամադրման ծառայությունների մատուցման պայմանագրով ստանձնած մատուցվող ծառայությունների նկարագրին համապատասխան անօթևան անձանց որակյալ ծառայություններ մատուցելու, ինչպես նաև հասարակության մեջ վերջիններիս ինտեգրելու, ընտանիք վերադարձնելու, ծրագրի արդյունավետության և նպատակին ծառայելու վերաբերյալ:

Ժամկետ՝ 30 օր

2. **<<Հ. Ք. Կոֆոեդ>> բարեգործական հիմնադրամի տնօրեն Շ. Խաչատրյանին՝**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչությանը ներկայացնել «05. Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի, նախորդող երեք տարիների նախատեսված և փաստացի իրականացված արդյունքների դինամիկան՝ աշխատանքի տեղավորում, վերադարձ ընտանիք և տուն-ինտերնատներ ուղեգրումների ցուցանիշների վերաբերյալ:

Ժամկետ՝ 20 օր

3. **Նախարարության աշխատակազմի վերլուծության ու մոնիթորինգի վարչության պետ Հ. Մուրադյանին՝**

Հաջորդ նիստի օրակարգում ամփոփ ձևով ներկայացնել նախարարության աշխատակազմի վերլուծության ու մոնիթորինգի վարչության 2016թ. կատարած աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

Ժամկետ՝ 20 օր

4. **<<Հ. Ք. Կոֆոեդ>> բարեգործական հիմնադրամի տնօրեն Շ. Խաչատրյանին և նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ Ա. Մինասյանին՝**

Համատեղ մշակել և ներկայացնել <<Հ. Ք. Կոֆոեդ>> բարեգործական հիմնադրամի շահառուների սոցիալական դեպքի վարման միասնական ձևաչափ:

Ժամկետ՝ 20 օր

5. **Նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի պետ Ս. Տերտերյանին՝**

5.1 Եվս մեկ անգամ իրականացնել 2014թ. էլեկտրաէներգիայի ավել վճարման արդյունքում առաջացած առկա դեբիտորական պարտքերի վերլուծությունները և ներկայացնել համապատասխան հիմնավորումներ և եզրակացություն 2014թ. արդյունքներով ավել վճարված գումարների վերաբերյալ:

Ժամկետ՝ 20 օր

5.2 Նախարարի հաստատմանը ներկայացնել ներքին աուդիտի արդյունքներով բացահայտած խախտումների վերացման և ներկայացված առաջարկությունների կատարման վերաբերյալ միջոցառումների ժամանակացույցի հրամանի նախագիծ:

Ժամկետ՝ 10 օր

5.3 2016թ. կատարված աշխատանքների վերաբերյալ ներքին աուդիտի կոմիտեի անդամներին ներկայացնել տարեկան ամփոփ հաշվետվություն, մոտակա կոմիտեի նիստում քննարկելու նպատակով:

5.4 Ներքին աուդիտի օրենսդրությանը համաձայն մշակել ներքին աուդիտի կանոնակարգի փոփոխության նախագիծ, որով կսահմանվեն յուրաքանչյուր աուդիտի ենթակա միավորի ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվող չափորոշիչները:

Ժամկետ՝ 60 օր

6. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարարության թվով 10 ՊՈԱԿ-ների տնօրեններին՝

6.1 Այսուհետ բացառել չհայտարարված աուդիտի շրջանակներում արձանագրված *թերությունները:*

Պարբերաբար

Կոմիտեի նախագահ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կոմիտեի անդամներ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ե. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ջ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆ